

ՀՅԴ Հայաստանի Գերագույն Մարմինը հիւրընկալեց ԱՄՆ դեսպան Լին Թրէյսիին

25 Նոյեմբեր 2019–ին, Հայաստանի մէջ ԱՄՆ դեսպան Լին Թրէյսիին նախաձեռնութեամբ, ՀՅԴ Հայաստանի Գերագույն Մարմնի գրասենեակին մէջ տեղի ունեցած հանդիպում ՀՅԴ Հայաստանի Գերագույն Մարմնի անդամներուն հետ:

Դեսպան Լին Թրէյսիին կ'ուղեկցէին ՀՀ մէջ ԱՄՆ դեսպանութեան քաղաքական եւ տնտեսական բաժնի ղեկավար Ռայան Քեմբլը, քաղաքական հարցերու մասնագէտ Լիլիթ Օհանեան:

ՀՅԴ Հայաստանի կառույցը կը ներկայացնէին ԳՄ ներկայացուցիչ Իշխան Սաղաթեան, ԳՄ անդամներ Արծուիկ Մինասեան, Լիլիթ Գալստեան եւ Աշոտ Սիմոնեան:

Շնորհակալութիւն յայտնելով դեսպանին՝ հանդիպման նախաձեռնութեան համար, ինչպէս նաեւ շնորհաւորելով անոր Հայաստանի մէջ ԱՄՆ դեսպանի պաշտօնը ստանձնելուն առթիւ՝ Իշխան Սաղաթեան ընդհանուր գիծերով ներկայացուց իշխանափոխութեանն ետք Հայաստանի մէջ ձեւաւորուած քաղաքական իրողութիւնները: Ան մասնաւորապէս հնչեցուց ՀՅԴ Հայաստանի կառույցի գնահատականներն ու շարք մը մտահոգութիւններ բարձրաձայնեց երկրին մէջ ընթացող քաղաքական գործընթացներու առնչութեամբ:

Հանդիպման մասնակից ՀՅԴ ԳՄ միւս անդամները շեշտադրեցին հանրապետութեան մէջ իրական, բովանդակային եւ համակարգուած բարեփոխումներու իրականացման անհրաժեշտութիւնը, միաժամանակ իրենց անհանգստութիւնը արտայայտեցին երկրին մէջ սահմանադրական եւ ժողովրդավարական համալսարաններուն նկատմամբ ընթացք առած անառողջ գործընթացներուն հարցով:

Դեսպան Թրէյսի իր խօսքին մէջ մասնաւորապէս նշեց. «Ես արժեւորում եմ ԱՄՆ դեսպանատան երկարամեայ յարաբերութիւնները Հայաստանի քաղաքական կուսակցութիւնների, այդ թւում՝ ՀՅԴ–ի հետ: Միացեալ Նահանգները չարունակում է հաւատարիմ մնալ Հայաստանի ժողովրդավարական, տնտեսական ու սոցիալական կառավարման շնչակցելու՝ իր յանձնառութեանը, ինչպէս դա եղել է մեր դիւանագիտական յարաբերութիւնների 27 տարիներին»:

Հանդիպման աւարտին կողմերը շփոմները պարբերական դարձնելու եւ մօտեցումները միմեանց փոխանակելու անհրաժեշտութիւն յայտնեցին:

Ազգային առաջնորդարանի առաքելութիւնը Գեղարքունիքի մարզի Մաքենիս սահմանամերձ գիւղին մէջ

Շաբաթ, 23 Նոյեմբեր 2019–ին, կէսօրէն ետք ժամը 15:30–ին, Գեղարքունիքի մարզի Մաքենիս սահմանամերձ գիւղին մէջ, տեղի ունեցած բացումը՝ Հայաստանի Հանրապետութեան Գեղարքունիք Մարզի Մաքենիս գիւղի միջնակարգ դպրոցի համակարգչային դասարանի, հովանաւորութեամբ՝ Գերաշնորհ Տ. Բարգէն Արք. Չարեանի եւ մեկենասութեամբ ԳանատաՅայ Տէր եւ Տիկին Վարուժան եւ Սիլվա Լափոյեաններու:



Մաքենիս գիւղը յայտնի է Մաքենեաց վանքով, որ 9–13–րդ դարերուն եղած է Մեծ Հայքի Գեղարքունիք գաւառի ամէնէն նշանավոր կրօնական–մշակութային կեդրոնը:

Հայաստանի Հանրապետութեան Գեղարքունիքի մարզի Մաքենիս գիւղը կը գտնուի Վարդենիս քաղաքէն 18–քմ հարաւ–արեւմուտք: Մովի մակարդակէն բարձր է 2231–միջր:

Առաջնորդ Սրբազան Հայրը երբ գիւղ ժամանեց, միջնակարգի աշակերտները դիմաւորեցին զինք եւ ան կատարեց աղ ու հացի օրհնութիւն: Անմիջապէս ետք, աշակերտները գեղարուեստական ծրագրով հանդէս եկան, որմէ ետք խօսք առաւ Առաջնորդ Սրբազան Հայրը (յսել տեսերիցը):

Հանդիսութեան ներկայ էր Գեղարքունիքի նախկին մարզպետ եւ ՀՅԴ Գերագոյն Մարմնի ներկայացուցիչ՝ Պրն. Իշխան Սաղաթեան եւ տիկինը՝ Լիանան: Սոյն ծրագիրը արդէն իսկ սկիզբ առած էր Պրն. Սաղաթեանի մարզպետութեան ժամանակահատուածէն: Աւարտին, տեղի ունեցած դասարանի պաշտօնական բացումը եւ օրհնութիւնը:

ԴԻԻԱՆ ԱԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ

«Արցախի բարեկամներու համաժողով»ին մասնակցած Քեպէգի Խորհրդարանի անդամ Կի Ուելթթի աչցելեց «Հորիզոն»ի խմբագրատուն

Նոյեմբեր 22–ին, Քեպէգի Խորհրդարանի անդամ Կի Ուելթթի հիւրընկալուեցաւ «Հորիզոն»ի խմբագրութեան կողմէ եւ հարցազրոյց ունեցաւ «Հորիզոն»ի Փրանսերէն բաժնի աշխատակից Աստղիկ Աբրահամեանի հետ: Հոկտեմբեր 11–ին Ստեփանակերտի մէջ կայացած ՀՅԴ–ի եւ Արցախի արտաքին գործոց նախարարութեան կողմէ կազմակերպուած «Համագործակցութիւն յանուն արդարութեան եւ խաղաղութեան» խորագիրը կրող Արցախի բարեկամներու քառօրեայ համաժողովի մասնակիցներէն էր Կի Ուելթթի: Խորհրդաժողովին կը մասնակցէին 30 երկիրներէ 150 հասարակական, քաղաքական գործիչներ եւ մտաւորականներ: Ժողովին մասնակցած էր նաեւ Գանատայի Օնթարիո նահանգի խորհրդարանի անդամ Արիս Պապիկեանը, որուն հետ հարցազրոյց կատարեց «Հորիզոն»ի աւագ աշխատակից Սարին Փոլատեանը: Պրն. Ուելթթի Հարցազրոյցը նկարահանեց «Հորիզոն»ի տեսանկյուններու բաժանմունքի վարիչ Նարէ Նոյստեանը:

Հարցազրոյցի աւարտին «Հորիզոն»ի վարիչ–խմբագիր Վահագն Գարաբաշեան եւ վարչական պատասխանատու Սիլվա Էհրամեան պրն. Ուելթթիին ծանօթացուցին «Հորիզոն»ի 40–ամեայ պատմութեան եւ յատկապէս Գանատայի գաղնակցային, նահանգային եւ քաղաքապետական մակարդակներու վրայ «Հորիզոն»ի ծաւալած լրագրական գործունէութիւնը:





Your Passport to Adventure.



2019 Passport TOURING

Selling start from

\$50,900*

LEAP ON IT!

HONDA GABRIEL

Book your test drive with

Kevorg Asadourian or Haig Khobassarian

7000, boul. Henri-Bourassa E.
Montréal, QC H1G 6C4

514 - 327 - 7777

www.hondagabriel.com



LES MAGASINS ADONIS
VOUS SOUHAITENT DE JOYEUSES FÊTES

**ADONIS STORES
WISH YOU HAPPY HOLIDAYS**



Sauvé - Des sources (DDO) - Laval (Curé labelle) - Laval EST
Anjou - Place Vertu - Centre Ville - Grifintown - Brossard
Gatineau - Ottawa - Mississauga - Scarborough - Dundas

Եօթանասուն Տարուան Անդուլ Պաքարը Կը Ծարուհակուի Միւնույն Վճռականութեամբ (Հայ Դատի Պրիքսէշի Բանգանակութեան լոյսին տակ)

Միացեալ Նահանգներու մէջ 1944ին կատարուած ժողովրդային ան-նախընթաց հանգանակութեամբ մը, Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը հիմը կը դնէր Հայ Դատի իր արհեստա-վարժ գործունէութեան, հանգանակ-ուած 165000 տղարի շնորհիւ Նիւ Եորքի մէջ բանալով իր առաջին պաշտո-նական գրասենեակը: Վաղրին ընտրու-թիւնը պատահական էր. տուեալ քա-ղաքը ՄԱԿի կեդրոնն էր, եւ մեր Դատի ճանաչումը առաջին հերթին կ'առնէ-ուէր անոր:

Ահաւասիկ այդ օրէն ու ամբողջ եօթանասուն տարի, ՀՅԴ Հայ Դատի գրասենեակներն ու յանձնախումբերը գործեցին անընդմէջ, պայքարի ան-խախտ միեւնոյն համոզումով, ոգիով ու կամքով, հակառակ բերեմն արտաքին թէ ներազգային ճակատի վրայ յամեցող դժուարութիւններու եւ խոչընդոտնե-րու:

Սակայն, փաստօրէն, մեր ժողո-վուրդին յանձնառու զանգուածը միշտ ալ մնաց Հայ Դատի կողքին եւ քաջալե-րեց, զօրակցեցաւ անոր՝ բանիւ եւ գոր-ծով: Ամբողջ եօթանասուն տարի, յանձնառու այդ զանգուածը բերեք չզլացաւ ե՛ւ բարոյական, ե՛ւ նիւթական իր նեցուկը: Վստահեցա՛ւ Դաշնակցու-թեան, վստահեցա՛ւ Հայ Դատի նկատ-մամբ Դաշնակցութեան անսակարկ ու անշահախնդիր նուիրումին, որ եղաւ ի հարկին՝ կեանքի գնով նաեւ:

Այլապէս ինչպէ՞ս բացատրել տա-

կաւին քանի մը օր առաջ, 9 նոյեմբերին, Պրիքսէշի մէջ կատարուած 2.5 միլիոն տոլարի հանգանակութիւնը ի նպաստ Եւրոպայի Հայ Դատին:

Հարցում. ինչո՞ւ՞ այս վստահու-թիւնը, եւ քանիբո՞րդ անգամն ըլլալով: Եթէ հաշուենք Եւրոպայի համար նախորդ չորս հանգանակութիւնները եւս (Ժընեւ, Փարիզ, Տուպայ, Փարիզ), հանգանակ-ուած ընդհանուր գումարը կը հասնէ 15 միլիոն տոլարի սահմանը: Եւ ասիկա, կ'ընդգծենք, միա՛յն Եւրոպայի պարա-գային, եւ ոչ՝ համագաղութային, ուր այ-լապէս շատ աւելի մեծ տարողութիւն կը ստանան հարկաւ թուանշանները:

Արդ, անգամ մը եւս կ'ուղղենք հարցումը. ինչո՞ւ՞ շարունակուող այս վստահութիւնը: Վերջին հաշուով կը խօ-սինք նիւթականի մասին, եւ սեւէ մէկը, մանաւանդ տնտեսական ներկայ դժուար պայմաններուն մէջ, իր գրպանը չի բա-նար անտեղիօրէն, հեշտօրէն...

Ուրեմն պարզ է, թէ ինչո՞ւ:

Որովհետեւ երբ ժողովուրդը կը հե-տեւի Եւրոպայի Հայ Դատի արձանագրած յաջողութիւններուն եւ կը տեսնէ շօշ/ափելի արդիւնքներ տարուած աշխա-տանքներուն մէջ՝ քարոզչական, յարա-բերական թէ քաղաքական, երբ գիտէ, որ Հայոց Յեղափոխութեան միջազգային ճանաչման ի խնդիր տարուած իրերայա-ջորդ սերունդներու հաւաքական յամառ աշխատանքին մէջ առիւծի բաժինը կը խլեն Հայ Դատի մեր միաւորները, բնա-կանաբար կը զօրակցի, կը քաջալերէ, կը

սատարէ: Երբ կը տեսնէ, որ Պրիքսէշի գրասենեակը արցախեան թղթածրարի կապուած որքա՞ն աշխատանք կը տանի, որքան եւրոպացի խորհրդարանականներ, ակադեմականներ, տարբեր մարզի գոր-ծիչներ կ'ուղորդէ դէպի Ստեփանակերտ, ուրկէ բնականաբար անոնք կը վերա-դառնան՝ տաղնապին դժով հայկակա՛ն կողմի թեղերով ամրապնդուած, հակա-ռակ՝ ազերիական կողմի ծաւալած ապա-տեղեկատուական հակայական արշաւին ու մեր պիւտճէին բազմապատիկը ծախ-սուող անոնց փեթրոտոլարներուն, մեր հայրենակիցները սիրով կը զօրակցին ու իրենց լուծման կը բերեն հաւաքական մեր պայքարին: Այո, երբ մեր ազգայինները կը հասկնան, որ ի վերջոյ, հայկական դեպքանատուներուն ու հիւպատոսա-րաններուն, ինչպէս նաեւ Արցախի ներ-կայացուցչութիւններուն կողքին կանգ-նած ու անոր սատարող արհեստավարժ, փորձառու ու ամուր շարասիւն է Եւրո-պական Միութեան մայրաքաղաք Պրիքսէշի մեր գրասենեակը, որ անշուշտ իր շուրջ ունի Եւրոպայի տարբեր երկիր-ներու մէջ գործող Հայ Դատի տեղական յանձնախումբերու կամաւոր հսկայ բա-նակը, վստահաբար պիտի գտնապնդուին ու պինդ պիտի կանգնին մեր կողքին:

Եւ տակաւին կայ ուղղակի դիպու-կը: Երբ ժողովուրդը կը հաստատէ, որ այս վեհ ծառայութեան մէջ չունին են-թակայական մօտեցումներ, այլ՝ միայն ու միայն մեր սրբազան Դատին ծառա-յելու անկեղծ երզում ու պատրաստակա-մութիւն, երբ մօտդ տիրականը համազ-գային ու համահայկական մտածողու-թիւնն է եւ ոչ թէ հատուածական, երբ քաղաքական ուղեգիծիդ եւ վարքագի-ծիդ մէջ ամենայն պայծառութեամբ կ'երեւի պետութիւն-իշխանութիւն սահ-մանազոնմը ու տարբերակումը, այլ խօսքով, երբ ան կը հաստատէ, որ հակա-ռակ հայրենի իշխանութեանց վարած քաղաքականութեան ընդդիմութեանդ, անոր հետ կը շարունակես պայմանական համագործակցութիւնդ՝ յանուն հայրե-նիքի եւ պետութեան շահերուն, ամէն բանէ վեր դասելով պետականութեան ամրապնդումը, պարզ է որ ոչ միայն

պիտի սատար կանգնի, այլեւ պիտի գնահատէ ու ողջունէ քաղաքական այս հասունութիւնդ, որ կը բխի համազգա-յին մտածողութենէդ ու համահայկական էութենէդ:

Աւելի՛ն: Երբ հանգանակութեան ձեռնարկիդ ներկայ են Մեծի Տանն Կի-լիկիոյ Կաթողիկոսը, Ամենայն Հայոց Կաթողիկոսը (իր ներկայացուցիչով), Արցախի Հանրապետութեան նախագա-հը, Հայաստանի պետութեան ներկայա-ցուցիչը յանձին դեսպանին, երբ Հայաս-տանի Հանրապետութեան նախագահը իր ուղերձով կը հաստատէ, որ Հայ Դատի աշխատանքները անգնահատելի են մեր պետականութեան համար, յատկապէս՝ արտաքին քաղաքականութեան համար, երբ Վեհափառ Հարապետը Հայ իրակա-նութեան մէջ առանձնակի ու երակի կը նկատէ Դաշնակցութեան դերակատա-րութիւնը, անշուշտ որ ժողովուրդը առաւել պիտի ամրապնդէ վստահու-թիւնը հանդէպ իր ճանչցած կուսակցու-թեան ու անոր ծաւալած համազգային տարողութեան գործունէութեան:

Վերջապէս կայ նաեւ ամենէ՛ն կա-րեւոր հանգամանքը: Մեր ժողովուրդը լաւ գիտէ, որ մեր ուժի աղբիւրը ի՛նք է: Ֆինանսական ուժի մասին է այստեղ խօսքը: Գիտէ, որ մենք կը դիմենք միա՛յն իրեն, իր ճակտի քրտինքին, մա-քուր ու հալալ քսակին, որովհետեւ կը մերժենք մութ, պղտոր, օտար այլ աղ-բիւրներ, որովհետեւ մենք էապէս ազ-գային ենք, իսկ մեր Դատը՝ զուլալ ու արդար: Եւ ճիշդ ա՛յս իսկ պատճառով, մենք ոչ մէկուն ենթակայ ենք ու հաշ-ուետու, բացի հարազատ մեր ժողովուր-դին:

Ահաւասիկ ազգային-քաղաքա-կան ա՛յս պրիսմակէն պէտք է դիտել ու արժեւորել ՀՅԴ Բիւրոյի Հայ Դատի Պրիքսէշեան նախաձեռնութիւնը , այլ ոչ՝ իբրեւ սոսկական հանգանակական միջոցառում: Եւ այս համոզումով ու այս ճանապարհով պիտի շարունակուի երթը, ընդմիշտ, մինչեւ վերջնական յաղթանակ:

ՀՐԱՉ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ




Ձեր բոլոր ճամբորդական Կարիքներուն համար հեռաձայնել՝
(514) 284-7676

ՅԱՏՈՒԿ ԳԻՆԵՐ ԴԵՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ...

ԼԱԻՍԳՈՅՆ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ ԵՒ ՅԱՐՄԱՐԱԳՈՅՆ ԳԻՆԵՐ

PERMIS DE QUÉBEC

3438 Rue St-Denis, Montreal, QC H2X 3L3, Fax: 514-284-7677

 Ghadir Meat & Restaurant T. 416-750-7404 T. 416-750-7400 1848 Lawrence Avenue E. Scarborough, ON M1R 2Y4 E-mail: info@ghadirmeatmarket.com	 Anto Keledjian Sales Representative Residential & Commercial Dir: (416) 930-2686 Bus: (416) 588-6777 570 Bloor St. W., Toronto, ON M5G 1K1 ANTOK13@GMAIL.COM • WWW.TORONTOSOLD.CA	 SUQ 2 Champagne Drive # B9 Toronto, ON M3J 2C5 Tel: (416) 661 8998 www.suqkitchen.ca
 ANI Restaurant 905.761.6484 1450 Clark Ave. West, Thornhill ON L4J 7R5	 Annie Varbedian Sales Representative Direct: (416) 918-3615 Office: (416) 739-7200 Fax: (416) 739-9367 annievarbed@hotmial.com www.suttongroupadmiral.com	 hearing aid source Andre Ayvazyan HIS B.A.S andre@HearingAidSource.ca 416 754 4327 (HEAR) Parkway Mall, 85 Ellesmere Rd., #65, Toronto, ON, M1R 4B9
 Gary Chahinian President, Broker of Record 416-258-8892 Gabriel Chahinian Sales Representative 647-580-5818 The Diamond Realty	 I.D.A. Part of the Regal family of pharmacies. Pharmacists Sarkis Balian Vartan Balian Maral Abdalian Balian Cassandra Pharmacy Inc. 2040 Victoria Park Ave. Toronto, Ontario M1R 1V2 Tel. : 416.449.2040 Fax: 416.449.2048	 ANI BAKERY ԱՆԻ ՓՈԱՊԱՆ Middle Eastern Pizza Lahmajoun ARSEN DABBAGHIAN 25 Howden Road, Unit #2 Scarborough, Ontario M1R 3C8 Tel: 416.285.7164

Շրջանառութիւնից հանել կամ արմատապէս վերանայել «Բարձրագոյն կրթութեան եւ գիտութեան մասին» օրէնքի նախագիծը. ՀՅԴ ՀԵՄ

ՀՅԴ ՀԵՄ՝ ներկայացուցիչներն իրենց պահանջների վերաբերեալ յայտարարու–
թիւն են տարածել, որում, մասնաւորապէս, նշոււմ է.

«Վերահաստատելով յանուն առաջադէմ եւ ազգային արժեհամակարգի վրայ հիմնուած հասարակութիւն ունենալու պայքարում մեր վճռականութիւնը՝ ստորեւ ներկայացնում ենք մեր պահանջները.

1. Կրթութեան, գիտութեան, մշակոյթի եւ մարմնամարզի ոլորտներում արդիա–
կան պահանջներից եւ ազգային պետութիւն ունենալու հրամայականից բխող համա–
պատասխան ռազմավարութիւնների մշակում եւ հրապարակում:

2. Կրթութեան, գիտութեան, մշակոյթի եւ մարմնամարզի ոլորտների պետական ֆինանսաւորման էական աւելացում:

Առաջիկայ տարիների համար անհրաժեշտ է ռազմավարական նպատակ ունենալ կրթութեանը յատկացուող միջոցների ծաւալի մեծացումը՝ այնպէս, որ այդ միջոցները կազմեն ՀՆԱ 3–4 տոկոսը, իսկ գիտութեան պարագայում այդ թիւը պէտք է դերա–
զանցի ՀՆԱ 1 տոկոսը:

3. Ապահովելով «Հայոց լեզու» եւ «Հայոց պատմութիւն» առարկաների՝ ԲՈՒՀ–
երում դասաւանդման պարտադիր սկզբունքը՝ ձեռնամուխ լինել համապատասխան հայեցակարգերի ու մասնագիտական ծրագրերի մշակմանը:

«Հայոց լեզու» առարկայի դասաւանդման շրջանակներում պէտք է ձեռք բեր–
ուեն հիմնաւոր գիտելիքներ, որոնք թույլ կը տան ԲՈՒՀ–ի շրջանաւարտներին՝ տիրա–
պետել մասնագիտական տերմինաբանութեանը: «Հայոց պատմութիւն» առարկայի
պարագայում ուսանողների շրջանում պէտք է ձեւաւորել քննական մտածողութիւն
եւ սեփական հայրենիքի առջեւ ծառացած մարտահրաւէրների խորքային ընկալում:

4. Ապահովելով «Հայոց եկեղեցու պատմութիւն» առարկայի պարտադիր դա–
սաւանդումը դպրոցներում՝ ուշադրութիւն դարձնել առարկայի շրջանակներում ազ–
գային ինքնութեան անքակտելի մասը կազմող Հայ Առաքելական եկեղեցու էութեան
ներկայացմանը, աշակերտների շրջանում պետականամէտ եւ հայաստանակենտրոն
մտածելակերպի ամրապնդմանը:

5. Շրջանառութիւնից հանել կամ արմատապէս վերանայել Բարձրագոյն կրթու–
թեան եւ գիտութեան մասին օրէնքի նախագիծը:

Ձեռնամուխ լինել ԲՈՒՀ–երի իրական ակադեմիական ազատութեան եւ կառա–
վարման ինքնավարութեանը նպաստող նախագծի ներկայացմանը, որը նպատակ
պէտք է ունենայ ապահովելու ԲՈՒՀ–գիտութիւն–աշխատաշուկայ կապը:

Նախագծում պէտք է որոշակի լինի նաեւ գիտութեան զարգացման գործում
Գիտութիւնների Ազգային Ակադեմիայի դերը:

6. Այս փոփոխութիւնների կարեւորութիւնը անտեսող կամ ազգային օրակարգը
հեզնող ցանկացած պաշտօնեայ պէտք է օր առաջ ազատուի զբաղեցրած պաշտօնից:

Մեր գործողութիւնները շարունակելու են բխել վերը նշուած պահանջների
կեանքի կոչման հրամայականի տրամաբանութիւնից»:

ՀՅԴ ՀԵՄ

ՀՅԴ-ի Հանդիպումները՝ Արցախի Նախագահութեան Թեկնածուներուն Հետ

18 նոյեմբերին ՀՅԴ Արցախի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ Դաւիթ Իշ–
խանեան եւ ՀՅԴ Արցախի Կեդրոնական կոմիտէի անդամ, Արցախի Հանրապետու–
թեան Ազգային ժողովի փոխնախագահ Վահրամ Բալայեան հանդիպումներ ունեցան
2020–ին Արցախի մէջ տեղի ունենալիք ընտրութիւններուն նախագահի հաւանական
թեկնածուներ Վիթայի Բալասանեանին եւ Ռուսլան Իսրայէլեանին հետ:

Մեկնաբանելով հանդիպումները՝ Դաւիթ Իշխանեան «Ապառաժ»–ին յայտնեց,
որ Արցախի մէջ արձանագրուած 20–էն աւելի կուսակցութիւններէն 15–ին հետ հան–
դիպումներէն ետք, սկսած է միասնական օրակարգի եւ համաձայնեցուած թեկնածուի
չուրջ հանդիպումներու երկրորդ փուլը: Ըստ անոր, այս փուլին հանդիպումներ պիտի
ունենան Արցախի նախագահի 5 հաւանական թեկնածուներուն հետ:

«Կայացած հանդիպումներու ընթացքին նախ միտքեր փոխանակուած են ՀՅԴ–
ի առաջարկած միասնական օրակարգին շուրջ ստեղծուած համախոհութիւնը տրամա–
բանական եզրայանգման հասցնելու հոլովոյթին ուղղութեամբ: Արցախի նախագահի
հաւանական թեկնածուներու հետ քննարկուած է, թէ արդեօք անոնք կարելի կը նկա–
տե՞ն համաձայնեցուած թեկնածու դառնալու հաւանականութիւնը, կարելի՞ է արդ–
եօք միաւորումը այլ թեկնածուի շուրջ եւ հաւանական կը նկատե՞ն արդեօք հա–
մախմբումը ՀՅԴ–ի կողմէ առաջարկուած թեկնածուի շուրջ», պարզաբանեց Դաւիթ
Իշխանեան:

Անոր համաձայն, հանդիպումները եղած են անկեղծ, անկաշկանդ եւ փո–
խըմբռնման մթնոլորտի մէջ:

Նշենք, որ Վիթայի Բալասանեանի հետ հանդիպումին ներկայ էին նաեւ Արդա–
րութիւն կուսակցութեան, իսկ Ռուսլան Իսրայէլեանի հետ հանդիպումին՝ Անկախու–
թեան սերունդ կուսակցութեան ներկայացուցիչներ:

19 նոյեմբերին Դաւիթ Իշխանեան եւ Վահրամ Բալայեան հանդիպումներ ունե–
ցան Արայիկ Յարութիւնեանի եւ Աշոտ Ղուկեանի հետ:

Համախոհութեան մթնոլորտի մէջ տեղի ունեցած հանդիպումներուն Արցախի
նախագահի հաւանական թեկնածուներուն հետ քննարկուած են միասնական օրա–
կարգի եւ նախագահի համաձայնեցուած թեկնածուի վերաբերող հարցեր:

Նոյեմբերի 20–ին ՀՅԴ Արցախի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ Դաւիթ
Իշխանեան եւ ՀՅԴ Արցախի Կեդրոնական կոմիտէի անդամ, Արցախի Հանրապետու–
թեան Ազգային ժողովի փոխնախագահ Վահրամ Բալայեան ՀՅԴ Արցախի «Նիկոլ
Դուման» կեդրոնին մէջ հանդիպում ունեցան նախագահական թեկնածու, Արցախի
արտաքին գործոց նախարար Մասիս Մայիլեանի հետ:

19 նոյեմբերին նախագահի հաւանական թեկնածուներուն հետ հանդիպումնե–
րուն յաջորդեցին Արցախի մէջ արձանագրուած կուսակցութիւններուն հետ հանդի–
պումները, որոնց առանցքը հանդիսացաւ միասնական օրակարգի ձեւաւորումը:

ԴՈՐԻՉՂՆ **www.horizonweekly.ca** 

	Համազգայինի Գանատայի Շրջանային Վարչութիւն
	Ա. Եռամսեակ՝ յունուար - ապրիլ 2020
ԼԵՒՈՆ ՇԱՆԹ ՀԱՅԵՐԵՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՅՔ	
Նպատակ	
Համալրել ու զարգացնել հայկական վարժարաններէ շրջանաւարտներու արեւմտահայերէնի, հայ գրականութեան եւ մշակոյթի իմացութիւնը՝ գոլէժական մակարդակի վրայ:	
Տեւողութիւն	
- Երկու տարի, չորս եռամսեակներ ծմրան եւ աշնան ամիսներուն: - Եռամսեակը կը տեւէ 15 շաբաթներ, շաբաթ օրերը 3 ժամ դասապահերով: - Եռամսեակի սակը 100 գամ. տոլար:	
Պայման	
Հայերէնի հիմնական բառապաշարի եւ գրական ծանօթութիւններու տիրապետում:	
Դասընթացքի ղեկավար՝ Դոկտ. Վիգէն Թիւֆէնքճեան	
Սուրբ Յակոբ Վարժարան 3400 Nadon, Montréal, QC H4J 1P5  armenolog@gmail.com Արձանագրութիւն՝ armenolog.wordpress.com	


Ascenseur Adams Elevator Services Inc.
PO Box 30, St-Laurent, Qc. H4L 4V4
RBQ# 1812-6474-22
www.adamselevator.ca
TEL: 514-745-4455 - FAX: 514-745-6613
RENOVATION, REPAIRS, MAINTENANCE, INSTALLATION OF ELEVATORS.
Eddie, Pedro, Joyce Oughourlian

Սուրբ Յակոբ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ «Նոր Ծաղիկ» մանկապատանեկան երգչախումբի համերգը՝ Յովհաննէս Թումանեանի եւ Կոմիտասս վարդապետի ծննդեան 150-ամեակին առթիւ

Գործն է անմահ, լա՛ւ իմացէ՛ք,
Որ խօսուում է դարեդար,
Երնէ՛ղ նրան, որ իր գործով
Կ'ապրի անվերջ, անդադար։

Հրաշալի տօնի մը մասնակից դառնալու խանդավառութեամբ էր, որ մոնթ-րէալահայ հոծ բազմութիւն մը կը դիմէր դէպի salle Pierre Mercure, ուր տեղի պիտի ունենար «Նոր Ծաղիկ» մանկական երգչախումբի տարեկան համերգը, նուիրուած՝ Յովհաննէս Թումանեանի եւ Կոմիտասի ծննդեան 150ամեակին, օրհնութեամբ եւ նախագահութեամբ Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդին՝ Գեորշ. Տ. Բարբէն Արքեպիսկոպոսին, եւ հովանաւորութեամբ տէր եւ տիկին Սարօ եւ Թամար Տէր Պետրոսեանի եւ զաւակներուն։

«Նոր Ծաղիկ»ի 13րդ տարեկան համերգն է այս մէկը, որուն պատրաստութիւնը արդէն տարուան մը հետեւողական աշխատանք, համբերանք, սէր ու նուիրում կ'ենթադրէ, եւ որոնցմէ առիւծի բաժին մըն ալ՝ ծնողներու յանձնառութեամբ իրականացուածն է։ Միմիայն հաւատաքով եւ անչափելի սիրով տրուածն է, որ իր շուրջ կը խմբաւորէ գործին նուիրեալներու փաղանգ մը, որ ի գին անհաշուելի զոհողութիւններու, ոչ միայն կ'ապահովէ անոր գոյութիւնն ու պարբերական ելոյթները, այս պարագային՝ նաեւ անհամար պատարագներու երգչախմբային կատարումը, այլեւ՝ զայն կը դարձնէ այն դպրոցը, աւելի ճիշդ պիտի ըլլար ըսել՝ այն դարբնոցը, ուր մանուկը կը սնուցուի հայեցի դաստիարակութեամբ։ Ո՞վ կը դաւանի մանուկի հոգին ու միտքը կոփել նրբագոյն ճաշակով, ծային ու աղմուկը, երգն ու պոռնչումըը զանազանելու կարողութիւն ձեռք բերելու փորձով, եթէ ոչ՝ արուեստով իրականացող երաժշտութեան դասաւանդումը։ Արուեստը կարենալ ապրելու, անով սովորականէն վեր բարձրացած զգալու հմայքով լեցուած, մանուկը իր մէջ կը զարգացնէ նաեւ իրմէ պահանջուած կարգապահութիւնն ու պատասխանատուութեան զգացումը։

Այսօր քառասուն ութ հոգի հաշուող «Նոր Ծաղիկ»ի փորձառութեամբ, 13 տարիներու երկայնքին հայկական երաժշտութեամբ յազեցած ու անով հարստացած են 320 մանուկ ու պատանի, որոնցմէ պատկառելի խումբ մը, այսօր արդէն համալսարանական, անխառն սիրով ու նուիրումով կը մասնակցի երգչախումբին։ Անոնք «Նոր Ծաղիկ»ին իրենց բերած մասնակցութեամբ եւ յաճախակի ներկայութեամբ, համերգը կը զգեստաւորեն ու կը հարստացնեն ականջ, միտք ու հոգի շոյող ծայներու համոյթով, միշտ աշայլուրջ դեկավարութեամբ խմբավար տիկին Էլիզապէթ Հարպոյեանի, որ իր ուսերուն վերցուցած է «Նոր Ծաղիկ»ը արժանաւայել մակարդակի մը հասցնելու հսկայ պատասխանատուութիւնն ու անոր առնչուած աշխատանքը։

Ինչպէ՞ս կարելի է չարժեւորել իր կարգին՝ հմուտ դաշնակահարուհի՝ տիկին Դալար Հարպոյեան Գալլօղլեանի հսկայ ներդրումը արձանագրուած յաջողութիւններուն։ Դաշնակահարուհին է, որ իր երգի փորձերուն մասնակցութեամբ, ու երգին առընթեր՝ դեռ երգելու անվարժ մանուկներու ծայները կ'ուղղէ, կը վարժեցնէ ծայները ճիշդ արտաբերելու հմտութիւնը։ Իւրաքանչիւր տարուան համերգին «Նոր Ծաղիկ»ը հանդէս կու գայ նոր ծրարքով ու նոր բովանդակութեամբ, ի մեծ ուրախութիւն մոնթրէալահայ ունկնդիրներուն, որոնց կը հրամցուին հոգեւոր երգերէն ու պատարագէն զատ, ժողովրդական դասական դարձած երգեր, միշտ համեմուած՝ Կոմիտասի գործերով։

Այս համերգին յայտագիրը կը բաղկանար երկու մասէ։ Առաջինով՝ Յովհաննէս Թումանեանի «Չարին վերջը»ը

օփերէթն էր, Ազատ Մանուկեանի երաժշտութեամբ, իսկ երկրորդով՝ Կոմիտասէն տասը երգ, որոնցմէ մի քանին առ տակաւ անձանօթ եւ հաճելի նորութիւն էին։ Խմբավարը յաջողութեամբ համեմած էր օփերէթը Թումանեանի քառեակներով ու խօսքերով, որ սքանչելի առողանութեամբ կը կատարէր երգչախումբի անդամներէն Վայգ Աճէմեան։

Ինչպէս ամէն կշիռ ու վարկ ունեցող օփերէթ, «Չարին վերջը»ն ալ կը սկսի նախերգանքով մը, որ կը սկսի մեր տաղանդաւոր դաշնակահարուհի տիկին Դալար Գալլօղլեանի սքանչելի կատարումով։ Ունկնդրողին ներգգացական աշխարհին առջեւ կը բացուի այն սարը, որուն վրայ կայ այն ծառը, որուն կողին կայ այն խոռոչը, եւ խոռոչին մէջ կան այն երեք ձագերը ծուարած՝ մայր կկուի թեւին տակ, եւ որուն պատմութիւնը լսած ենք հազարհազար անգամ, մանկապարտէզէն մինչեւ նախակրթարան, անմեղուկ ու դիւրահաւատ մանուկի մեր արցունքոտ աչուկներով...։ Ի՞նչ կախարդական օրեր էին...։

Հիմա արդէն, անտառը լեցուն է թռչուններու ձայներով ու ծաղիկներու երգերով, գոյն ու բոյր է ամէն կողմ, երբ կը լսենք մայր կկուին «կկո՛ւ, կկո՛ւ» օրօրը, որ կ'երագէ իր ձագերուն թեւեր առնելն ու թռչիլը...։

Բեմի վրայի կկուն՝ որ կծկտած է իր խոռոչին մէջ, Աննաքրիսթին Հացագործեանն է, որ կը գերէ սրտերը, այնքան դիպուկ ու ճշգրիտ նօթով, որ սրահը քարացած կը մնայ մինչեւ վերջ, իր «կկո՛ւ, կկո՛ւ»ն լսելու հաճոյքին համար, անոր ճշգրիտ արտաբերումին ու ծայնի հարագատութեան համար։ Չար աղուէսը՝ Գառնի Մարտիրոսեանը, իսկական խաբեբայ աղուէսն է, որուն խօսքերուն կը հաւատայ անմիտ կկուն, կու տայ երկու ձագ, որ չար աղուէսը չըլլայ, թէ կացինն առնէ ու իր ծառը կտրէ, իր տաքուկ բոյնը քանդէ։ Նարինէ Կէօֆկէօգեան՝ այս անտառին խելացի ագռաւը, չար աղուէսին բերնին չափը կու տայ գինք հսկայ գամբուին (Արեւի Յակոբեան) անհատուած արտոժակին կեր դարձնելով։ Հոս արժէ անպայման նշել, որ անտառային ծաղիկներուն երգերը, արդէն այնքան վարժ երգողի հմտութիւն ցուցաբերողի վստահութեամբ կատարեցին Մէլլրի Գայապալեան, Սարին Կոստանեան, Վանի Թոքաթլեան, Անի Քեհնայեան, Նայիրի Ճուքաբլեան, Ալիք Չափարեան եւ Նաւրինէ Կէօֆկէօգեան

Համերգին երկրորդ մասը սկսաւ Վայգ Աճէմեանը Պարոյր Սեւակի «Կոմիտաս Վարդապետ» բանաստեղծութեան արտասանութեամբ, ինքնին՝ այնքան համոզիչ ու հաղորդական, որ ծառայեց որպէս մուտք՝ Կոմիտասի աշխարհին։

Կոմիտասի մանկական «Հայր Մեր»ը, որ յօրինած էր ան Զանդըրըի բանտին մէջ, մեզ նետեց 104 տարի ետ։ Կալի Զաքարեանի յստակ ու անմեղուկ ծայնը կարծէք կու գար անապատներու որբերէն։ Խմբավարուհին դաղափարը ունեցած էր Կոմիտասի մասին քանի մը խօսքով համեմելու համերգը։ Ահա եւ մէջբերում մը անկէ, թէ ի՛նչ ըսած է Կոմիտասի աշակերտուհի Աղաւնի Մեսրոպեան. «Մանկապարտէզի դասի օրբնուն, Կոմիտաս շատ ուրախ տրամադրութեան մէջ կ'ըլլար։ Ան միշտ դասի ժամէն առաջ կու գար, եւ օգտագործելով մանուկներու զբօսանքի ազատ ժամերը, իր շուրջը կը հաւաքէր զանոնք եւ կ'երգէր ու կը պարէր անոնց հետ։ Իսկ երբ դասարան մտնէր՝ այդ երեխաները ալլեւս նախորդ դասերու չարաճճի եւ անզուսպ երեխաները չէին, կարծես ուրիշ երեխաներ ըլլային։ Բաւական էր, որ



Կոմիտաս ըսէր. «Ուշագրութի՛ւն, մանուկներ», եւ անոնք կարծես մագնիսացած՝ կը հետեւէին անոր ամէն մէկ ցուցմունքին»։

Ինչպէ՞ս չմտածել, չչափել ու չձեւել, կամ չփորձել վերլուծել մեր ժողովուրդին տաղանդաշատ ըլլալը։ Ինչպէ՞ս դիմացեր ենք ու կը դիմանանք դեռ այս քանի անգամ մորթուելէ ու հովուն տրուելէ ետք... Ի՞նչն է մեզ դիմացնողը, ստեղծագործող ազգ մը ըլլա՞լը, թէ... : Իսկ հիմա, եկո՛ւր ու բացատրէ «Նոր Ծաղիկ» մանկապատանեկան եւ ոչ արհեստավարժ երգչախումբին այսքան նրբազգաց կատարումը «Ով մեծաւքանչ դու լեզու»ին։ Կոկորդս կը սեղմեն թաց աչքերս, որովհետեւ միտքս գիտ թաղեց մեր լեզուին հետզհետէ մթաղնող իրականութեան մէջ, եւ ահա կ'երգենք «Ով մեծասքա՞նչ», երբ մեր մեծամասնութիւնը ամէն օր եւ ամէն վայրկեան կը դաւաճանէ անոր...։ Կը յաջորդէ «Մայրենի Լեզու»ն, կրկին լեզու, եւ բերինս մէջ այրած ու խարուկացած միտ ու ոսկորի հոտը կը կլլեմ ու կ'ափսոսամ. իմ մեռելներս կը յուշեն. հայերէն լեզուին չափանիշն է Կոմիտասը, մեր երաժշտութեան Մեսրոպ Մաշտոցը...։ Կարելի՞ է ուրանալ դուն քեզ, քու ինքնութիւնդ, յանուն... ինչի՞, ո՞ր տեսակի կեանքի համար...։

Կը վերադառնամ դադարէն ետք բեմ բարձրացող ձագուկներուն։ Ահա Կոմիտասով կը մտնենք արտ ու ալգի, քաղ անելու, կալեր կամնելու։ Վերջապէս կը մտնենք հայու հարազատ տուն, կը բարձրանանք ու կը դպչինք լուսնակի լոյսին, կը համրենք «երկրիքի աստղեբը»։ Ես մտովի՝ այս երգով կ'երթնամ իմ մանկկութեանս տան տանիքը աստղեր համրելու, եւ ընտրելու ի՛մա... մինչեւ... մինչեւ խմբավարի խօսքին աւարտը, թէ՛ «Կոմիտասը կը ցաւէր, որ մեր ժողովրդական երաժշտութիւնը մանկական երգեր գրեթէ չունի, եղածներն ալ անեղանակ են, որովհետեւ, երբ երեխան 56 տարեկան կը դառնար, ճիպոտը ձեռքը կու տային եւ դաշտ կ'ուղարկէին»։ «Անահիտ» հանդէս։

«Հօյ, նագան իմ, նագան իմ»։ Կ'ապշիմ։ Այսքան հնչեզ ու խորունկ պարիթիօն դարձաւ տասը տարի առաջուան բարալիկ ու ամչկոտ մանչուկը՝ մեր Նարեկ Զէրքէգեանը, այո՛, մե'ր Նաւեկը, մե'ր Կորիւնը, մեր ձագուկները, բոլո՛րը։ «Ասիկա օփերա կրնայ հասնիլ, կը տեսնես», կիսաձայն կը շնչայ քոյրս։ Կը փնտռեմ յայտագիրը, «Միայն ա՞ս պիտի երգէ», կը հարցնէ քանի մը աթոռ անդիէն տիկին մը, չեմ գիտեր, թէ որո՛ւ։ Ան ալ զգացուած կը թուի ըլլալ Նարեկին կատարողութեամբ։ Այնքան առնականութեամբ յորդող, լեցուն, աղուոր, բաւական կլորցած ձայն մը։ Այսքան լուսկեաց տղեկէն Էլօն, Էլիզապէթ Հարպոյեանը, ինչպէ՞ս յաջողեցաւ դուրս բերել երգելու, այս արդէն երիտասարդ դարձած տղուն, տաղանդը, այն ալ՝ այսքան ճիշդ հնչեղունակութեամբ։ Ահա հո՛ս է գաղտնիքը մանկավարժերաժիտխմբավարին եւ ճիպոտ չարժողին։

Ի՞նչ... արդէն Տրդ երգի՞ն հասանք, մութին մէջ կը փորձեմ կարդալ յայտագիրը եւ չեմ յաջողիր։ Կը յաջորդեն

Այազեագն ու Խնկի ծառը։ Իսկ երգչախո՞ւմբը... այնպիսի հրճուանք կ'ապրիմ...։ Որքան ատենէ ի վեր նման վայելք չուայլուած չէր մեզի։ Մենք դեռ հոս ենք, դեռ կանք, դեռ լեզուն կայ, քանի որ՝ մեր երգը կայ...

Այս որքան կասկած կայ ուղեղս դարպասող։ Պիտի հասնի՞նք կատարիք, Արարա՛տ։ Պիտի դիմանա՞ն նոր սերունդները մինչեւ այդ պայծառ օրը... որքա՞ն ատեն...։ Կը մտածեմ շուրջս տիրող անտարբերութեան մասին... երբ, «Նոր Ծաղիկ»ի հիմնադիր մանուկներու առաջին փաղանգին պատկանող, հիմա արդէն հասուն երիտասարդ՝ Կորիւն Գոյունեանի ձայնը կը լեցնէ սրահը Թու՝ մանեանի Զարկուած հայրենիք, լոյսի ու յոյսի ազատ հայրենիքով, որուն վերջին երկու համարները կ'երգեն Ռիմա Խարչաֆեանն ու Սիւզանա Արմաղանեանը, սքանչելիօրէն մարմնաւորելով բառերէն յորդող Թումանեանի պատգամը, վեր, աւելի վեր բարձրացնելով վերջին երկու տուներէն հնչող հայրենիքի լոյսն ու անկէ բխելիք ազատութիւնը։ Թումանեանի ապրած տարիները այսօրուընէ լաւը չէին, ահռելի ժամանակներ էին, եւ տեսնել «լոյսի հայրենի՞ք»։ Ինչպիսի՞ լաւատեսութեամբ մեզի կը փոխանցէ լուսաւոր ապագայի մը յոյսը։ Երգչախումբը կը միանայ մենբերդդին, սրահը կը թնդայ ծափերով։

Անուշ օփերալէն «Համբարձում, եայլա»ն եկաւ Թումանեանով եւ Տիգրանեանով փակելու այս սքանչելի համերգը։ Ընդհանրապէս նուազախումբով կատարուած այս կտորը, դաշնակի ընկերակցութեամբ իրականացնելը ինչպիսի՞ պատասխանատուութեան տակ կը դնէ դաշնակահարուհին, թերեւս միմիայն կտորին բաւական ծանօթներուն յայտնի է։ Ասիկա միմիայն համակ նուիրում ու բացարձակ ստեղնաշարի եւ թեքնիքի տիրապետում կը ցուցաբերէ, որոնցմով կ'արդարանայ երգչախումբին յաջողութիւնը։

Արդեօ՞ք չափազանցած կ'ըլլամ, եթէ ըսեմ, որ ես նոյնքան անխառն հրճուանք եւ ուրախութիւն զգացի, որքան՝ երբ կ'ունկնդրեմ Երեւանի պետական մանկական երգչախումբը Հեքիքեանի ղեկավարութեամբ, (որ կը վայելէ մեր պետութեան հովանաւորութիւնը) անշուշտ միշտ՝ բաղդատական եզրերու արժեւորմամբ։

Սրահէն դուրս, շնորհաւորողներու բազմութեան մէջէն կը լսէի զնահատանքի ջերմ խօսքեր, եւ ուզեա թէ չուզես, կը սկսիս մտածել, թէ ինչո՞ւ միմիայն մե'նք պիտի վայելենք այս համերգը, երբ մշակութային որակաւոր ձեռնարկներու սով կ'ապրինք ամէնուրէք։ Ինչո՞ւ գրկել, առ նուագն, մեզի մօտիկ հատարուանը նման վայելքէ։ Արժէ ոչ միայն մտածել ու յետաձգել որեւէ կառուցողական մշակութային գործունէութիւն անյայտ օրուան մը, այլ՝ մտասեւեռումով հետապնդել գաղութի հայկականութիւնը խթանող, որակ պատրաստող տեսլական մը։ «Նոր Ծաղիկ» երգչախումբի գոյացումը այդպիսի տեսլականի մը արդիւնքն է։

Վարդի Դանիէլեան

Մշակոյթ, Կրթութիւն, Պետականութիւն, Քաղաքացիութիւն

Մշակոյթի Աւանդական ու Նոր Դերերը

Մշակոյթը, իր ամենէն լայն առումով, դարեր չա֊րունակ եղած է մեր ազգը պահող ու պահպանող կենսական ուժը։ Մշակոյթը մեր ազգային ինքնութիւնն է, մեր դիմագիծը, մեզ բնորոշող եւ ուրիշ ազգերէ զանազանող ամենէն կարեւոր գործօնը, մեր ազգային վարկը։ Դարեր շարունակ, մշակոյթը եղած է մեր «բանակ»ը, մեր «պաշտպանութեան նախարարութիւն»ը, մեր ազգային անվտանգութեան երաշխաւորը։

Սակայն, պատմութիւնը եւ ճակատագիրը հայ ժողովուրդը գրկած են պետականութեա՜ն մշակոյթէն, եւ հետեւաբար, պատեհնութիւնը չենք ունեցած մշակոյթը «քաղաքացիացնելու», այսինքն՝ դաստիարակութեան ճամբով եւ մշակոյթով Հայաստանցի քաղաքացի կերտելու։ Սփիւռքը, պարտադրաբար, հայեցի կրթական ծրագրերով եւ մշակոյթով, կերտած է Հայ Մարդ, ո՛չ հայ քաղաքացի։ Հայաստանի մէջ, խորհրդային տարիներուն, ղեկավարութեան յանձնարարականը եղած է կերտել Սովետական քաղաքացի, ո՛չ հայ քաղաքացի։ Առաջին հանրապետութեան կարճատեւ տարիներուն եւ երրորդ հանրապետութեան աւելի երկար բայց անարդիւնաւետ տարիներուն, կրթական համակարգը, առաջինի պարագային ժամանակ չէ ունեցած եւ երկրորդի պարագային փորձը եւ միտումը չէ ունեցած ընդառաջելու «հայ քաղաքացի» դաստիարակելու հրամայականին։

Մեր հազարամեայ պատմութեան մէջ, հաւանաբար առաջին անգամ ըլլալով, այսօր ունինք թէ՛ պատեհնութիւնը եւ թէ՛ հրամայականը կրթական եւ մշակութային համակարգը լծելու քաղաքացի կերտելու, քաղաքական առաջնորդ պատրաստելու եւ պետութիւնը հզօրացնելու առաքելութեան։

Ներկայ Իրավիճակը։

Այսօր՝ թէ՛ Հայաստանի եւ թէ՛ Սփիւռքի մէջ, մշակոյթի սերունդէ սերունդ փոխանցման եւ պաշտպանութեան խողովակները, տարբեր պատճառներով, մեծաւ մասամբ խափանուած են։

Ժողովուրդին ներկայ մշակութային միջին մակարդակը այնքան նուաստացած է, որ այլեւս չի թուիր կապ ունենալ մեր հարուստ եւ բարձրորակ ազգային մշակութային ժառանգութեան հետ։ Փողոցներուն մէջ, սարսափելի է լսել երիտասարդութեան խօսակցական հայերէնը։ Ընտանեկան/առտնին մշակութային մակարդակը ենթարկուած է հեռուստացոյցի վատագոյն սերիալներու մակերեսային եւ անորակ գեղարուեստական նսեմութեան մէջ։ Ցանկացած առիթով կազմակերպուած խրախճանքներու ընթացքին, ժողովուրդին նախասիրութիւնը եղած է ականջ ու միտք խլացնող, անորակ, իբրեւ երաժշտութիւն ընդունուած աղմուկը, նոյնքան անշնորհք պարերու ընկերակցութեամբ։

Ի դէմ այս երեւոյթին՝ երկրին մտաւորական խաւը շատ յաճախ կը մնայ անտարբեր, եւ պետական այն մարմինները, որոնց վստահուած է մշակոյթը պահպանելու եւ զարգացնելու առաքելութիւնը, նահանջի մէջ կը թուին ըլլալ։ Ընդհանուր եւ համատարած շահագրգռութեան պակաս մը կը տիրէ մշակութային մակարդակի պահպանման հարցով։ Հանրային ելոյթներէն դուրս, գործնական գետնի վրայ, ժողովուրդին մշակութային մակարդակին ահաւոր անկումը ընդհանրապէս մտահոգութեան առարկայ չի թուիր ըլլալ։

Խօսքը Ինչի՞ Մասին Զէ՝

Կ'արժէ անմիջապէս յստակացնել թէ խօսքը օտարամերժ դիրքորոշումներ որդեգրելու մասին չէ։ Ո՛չ ալ արեւմտականացման կամ աշխարհայնացման դէմ պայքարելու մասին։ Ո՛չ ալ պահպանողական դիրքերէ յամառօրէն անցեալին կառչելու եւ մոլեռանդ ազգայնականութեան մասին։

Եւ մանաւանդ, խօսքը մշակութապէս լճանալու եւ կղզիանալու մասին չէ։

Խօսքը Ինչի՞ Մասին է

Խօսքը մեր հարուստ, կենդանի եւ դեռ աճող ու զարգացող մշակութային ժառանգութիւնը մեր առօրեայ կեանքին մէջ ընդգրկելու մասին է։ Խօսքը մակարդակի եւ որակի մասին է։ Մշակոյթի հանդէպ տիրող կրաւորական եւ անտարբեր կեցուածքէն սթափելու մասին է։ Ծոխ, հարուստ, աշխոյժ եւ ստեղծագործող մշակութային եւ մտաւորական կեանքի մասին է։ Այլազանութեան, խորքի եւ հոգեկան ու իմացական բարձրորակ ստեղծագործութեան մասին է։

Եւ մանաւանդ, խօսքը մեր պատմութեան եւ մշակոյթին մէջ ամրօրէն խորսխուած ազգային եւ քաղաքացիական գիտակցութիւն ստեղծելու մասին է։

Ու՞ր Կրնայինք (եւ դեռ կրնանք) Ըլլալ...

Գնահատելու համար թէ որքան ողբալի է հայ ժո-

ղովուրդին մշակութային միջին մակարդակը այսօր, պահ մը փորձենք պատկերացնել թէ ուր կրնայինք (եւ դեռ կրնանք) ըլլալ։ Պատկերացուցէք հետեւեալ դիպաշարը։

1. Անցեալ քսանութ տարիներուն, դպրոցներու եւ համալսարաններու մէջ, հեռատես, բովանդակալից եւ նպատակային կրթական ծրագիրներ կրնայինք որդեգրած եւ իրականացուցած ըլլալ, դասաւանդելով հայկական եւ միջազգային բեմերու վրայ երեցող մշակութային բարձրագոյն (դասական ե՛ւ արդի) նուաճումները։

2. Կրնայինք անկախութեան յաջորդող 1015 տարիներու ընթացքին, ՀՀ ամբողջ ուսուցչական կազմերը անցուցած ըլլալ հիմնական, կրթական ծրագրի նոր բովանդակութեան եւ նպատակներուն համապատասխանող, վերապատրաստական ծրագիրներէ։

3. Հայաստանի բնակչութեան 4050 տարեկանէն վար ամէն մարդ այսօր կրնար տիրապետել նուազագոյն երեք լեզուներու (հայերէն՝արեւելահայերէն ե՛ւ արեւմտահայերէն՝ռուսերէն եւ անգլերէն)։ Առաւել՝ չորրորդ ու հինգերորդ լեզուներու տիրապետող մեծամասնութիւն մը կրնար գոյութիւն ունենալ (որեւէ Եւրոպական Ասիական կամ Արեւելեան լեզու)։

4. Բացի լեզուներէն, ժողովուրդին այդ խաւին կարեւոր մէկ տոկոսը կրնար նաեւ մօտէն ծանօթացած ըլլալ նուազագոյն 23 տարբեր մշակոյթներու եւ իրենց համապատասխան գրական վաստակի յատկութիւններուն հետ։

5. Հայոց պատմութիւնը, իր ամենէն համապարփակ ծաւալով, արդէն աւելի քան տասնամեակ մը, դասաւանդուած կրնար ըլլալ նպատակ ունենալով ոչ թէ միայն պատմական գիտելիքներու փոխանցումը, այլ նաեւ իբրեւ անցեալէն քաղուած դաս, նպատակ ունենալով մասնաւորապէս պատրաստել ապագայի քաղաքական ղեկավարն ու քաղաքացին։

6. Ժողովուրդին այս խաւը արդէն իսկ այս դաստիարակութիւնը փոխանցած կրնար ըլլալ տուն, ճոխացնելով եւ բարձրացնելով իր ընտանեկան մշակութային մակարդակը։

7. Հեռուստացոյցի այլքները, որպէսզի կարենային ներգրաւել հանդիսատեսներու այս սերունդը, արդէն իսկ բարեփոխման ենթարկած կրնային ըլլալ իրենց յայտագիրները։

8. Այսպիսով, կրթական ծրագիրներու եւ տան մթնոլորտի միջեւ ստեղծուած կ'ըլլար զիրար ամրապնդող, դրական եւ կառուցողական շղթայ մը։

9. Մշակութային այս զարթօնքը փոխանցուած կ'ըլլար նաեւ ժողովրդական տարբեր միջոցառումներուն։

10. Մեր հարուստ մշակութային ժառանգութիւնը արդէն իսկ սկսած կ'ըլլար մաս կազմել միջին քաղաքացիին առօրեային։

11. Մշակոյթը եւ կրթութիւնը արդէն իսկ ստեղծած կ'ըլլային գիտակից քաղաքացիներու սերունդ մը, օժտուած մեր պատմութիւնն ու մշակոյթը հիմնաւորուած ձեւով գնահատելու կարողութեամբ եւ ազգային արժանապատւութեամբ։

12. Այս դաստիարակութիւնը թոյլ տուած կ'ըլլար նաեւ որ հասարակութիւնը, հաւատարիմ մնալով հանդերձ իր աւանդական արժէքներուն, դիւրութեամբ ընդունի արեւմտեան հիմնական արժէքներ, կապուած մարդու իրաւունքներու, խղճի եւ խօսքի ազատութեան, փոքրամասնութիւններու իրաւունքներու, ազատամտութեան, հանդուրժողութեան, եւ ժողովրդավարական սկզբունքներուն հետ։

Այսօր կրնայինք այս տեսլականին հասած ըլլալ եթէ կրթական համակարգը – բովանդակութեամբ, ուսուցչական անձնակազմով եւ դասաւանդելու մեթոտաբանութեամբ –անկախութենէն անմիջապէս յետոյ հիմնական բարեփոխումներու ենթարկուած ըլլար։ Քսանութ թանկ տարիներ կորսնցուցած ենք։ Այլեւս ժամանակ չունինք կորսնցնելու։

Հայաստանէն Անդին՝ Համայն Հայութեան...

Քանի որ տեսլական նկարագրելու ազատութիւնը եւ շուայլութիւնը ընծայած ենք մենք մեզի, պատկերացնենք նաեւ շատ աւելի արմատական ու յաւակնոտ փոփոխութիւններ պահանջող նոր իրավիճակ մը։ Պատկերացնենք որ ՀՀ Կրթութեան նախարարութիւնը, անկախութենէն յետոյ, իր կրթական ծրագրի հայկական մասը պատրաստելու ժամանակ, սփիւռքի բոլոր գլխաւոր կրթական եւ մշակութային կազմակերպութիւններուն մասնակցութիւնը եւ ներդրումը հրաւիրած ըլլար, եւ այսօր, աշխարհի բոլոր հայ դպրոցները, մօտէն գործակցելով ՀՀ կրթութեան եւ մշակոյթի նախարարութեան հետ, որդեգրած ըլլային հայ լեզուի, գրականութեան, պատմութեան եւ մշակոյթի հետ առնչուող նոյն կրթական ծրագիրը՝ ինչպէս Հայաստանի մէջ։ Պատկերացնենք աշխարհասփիւռ հայ ժողովուրդը, հակառակ իր

խորքային տարբերութիւններուն ու աններդաշնակ եւ ցիրուցան վիճակին, ՀՀ կրթական ծրագրին հայկական մասը համարած ըլլար այնքան հարուստ, այնքան լայն, ներառող, առարկայական, անաչառ եւ ներկայացուցչական մեր բազմակողմանի եւ հազարաշերտ պատմութեան, որ նոյնիսկ իրարու հակադրուած համայնքներ զայն ընդունէին։ Անշուշտ համայնքներու հետ կապուած իւրայատկութիւններ եւ տարբեր շեշտաւորումներ կրնային մնալ, բայցեւայնպէս, համայն Սփիւռքի կրթական եւ մշակութային կազմակերպութիւններուն ցանցը ընդունած եւ որդեգրած կ'ըլլար ՀՀ կրթական ծրագրին հայկական հատուածի հիմնական մասը։

Պատկերացնենք ա՛յս – աշխարհի որեւէ հայկական դպրոցէ շրջանաւարտ հայեր, ըլլան Ռուսահայ, Ճրանսահայ, Ամերիկահայ կամ Հայաստանցի, երբ որեւէ տեղ հանդիպին, զիրար աւելի լաւ հասկնան, ունենան նմանօրինակ ազգային արժէքներու ընկալում, աւելի հասարակաց քան տարբերող եզրեր, եւ մեծաւ մասամբ յաղթահարած ըլլան զիրենք բաժնող լեզուական խոչընդոտները։

Միայն այսպիսի իրավիճակի մը հասնելէ ետք է որ հիմք կ'ունենանք խօսելու «ազգային» արժէքներու մասին։ Այսօր, քաղաքական, մշակութային կամ կրթական ո՛չ մէկ խմբակցութիւն իրաւունքը ունի ինքզինք հռչակելու ազգային արժէքներու խօսնակ, ներկայացուցիչ կամ դարպասապահ, որովհետեւ համայն հայութեան կողմէ ընդունուած եւ ամրագրուած արժէքահամակարգ գոյութիւն չունի։ Ո՞ր հայ համայնքին արժէքներն են մեր ազգային արժէքները՞Ռուսաստանի ԿիսաՌուսացած հայութեա՞ն, թէ Պոսթոնի աւելի քան ԿիսաԱմերիկացած հայութեան, կամ Լիբանանի թուեղ ազգայնական հայրենասիրական միութիւններու՞ն, կամ Կլենտէյլի համեմատաբար նորակազմ Հայաստանցի համայնքի՞ն, կամ խորհրդային տարիներու մտածելափերպը պահած սերունդի՞ն։ Ինչպէ՞ս կրնանք անուանել ցանկացած արժէք «ազգային», երբ ամէն հայ համայնք ունի իր տարբեր եւ յաճախ այլ համայնքներու հետ բախող արժէքներու հասկացողութիւնը եւ կարծրատիպերը։

Այսուամենայնիւ, եթէ կրնանք պատկերացնել համաշխարհային հայ սերունդ մը, որ ծնած եւ մեծցած ըլլալով հանդերձ տնրբեր երկիրներու եւ միջավայրերու մէջ, ստացած է նմանօրինակ ազգային դաստիարակութիւն եւ հայեցի ուսում, թիբեւս այն ատեն կարելի կ'ըլլայ խօսիլ հասարակաց ազգային արժէքներու մասին։

Յարդ, այս որակի համաշխարհային հայկական կրթական համադրութիւն ֆիզիքապէս անկարելի էր, որովհետեւ չկար ոչ մէկ կեդրոնական «մազնիս» որ կրնար միաւորել եւ համադրել մեզ։ Այսօր, կայ Հայ Պետութիւն, որ կրնայ այդ ձգողական ուժը ըլլալ։ Այո, այո՛, պիտի ընդունինք, որ այսօրուայ իրողութիւնը մեկնակէտ ընդունելով, այսպիսի տեսլական իրականացնելը կը պահանջէ ազգային միասնականութեան եւ կամքի աննախադէպ ցուցաբերում։

Բայց, պահ մը թոյլ տանք մենք մեզի երեւակայել։ Յանդգնինք պատկերացնել որ ՀՀ պետականութեան ղեկավարները իսկապէս ունին հեռատեսութիւնը եւ խոհեմութիւնը հասկնալու որ իրենց առաջին եւ դերագոյն առաքելութիւնը երկիրը եւ հայ ժողովուրդը միաւորել է։ Այդտեղ է որ պէտք է փնտռել որեւէ քաղաքական առաջնորդի իսկական վարկանիշը։ Ցանկացած քաղաքական ուժ կրնայ պառակտումներ ստեղծել հասարակութեան մէջ։ Բայց իսկական առաջնորդին կոչը եւ մնայուն քաղաքական ժառանգութիւնը կը մնայ իր կարողութիւնը միաւորելու, ներգրաւելու, հաշտեցնելու, կազդուրելու, բուժելու, եւ ո՛չ թէ զրպարտելու, բաժնելու, յարձակելու, հայհոյելու□ Եւ հոս խօսքը միայն իշխանութեան չէ ուղղուած, այլ նաեւ բոլոր ընդդիմադիր քաղաքական ուժերուն։ Իբրեւ քաղաքական գործիչներ, բոլորը ունին միաւորելու նոյն պարտաւորութիւնը եւ առաքելութիւնը։

Ծիչդ այնպէս ինչպէս որ մեր միջին քաղաքացիին մշակութային մակարդակը բարձրացնելու կարիքը ունինք, նոյնպէս ունինք կարիքը մեր քաղաքական քննարկումները եւ վէճերը բոլորովին նոր մակարդակի վրայ բանաձեւելու, եւ հրաժարելու այսօր օգտագործուող պառակտիչ եւ վիրաւորական բառապաշարէն։

Թէ՛ ՀՀ Վարչապետը եւ թէ՛ Նախագահը մէկէ աւելի անգամներ յայտարարած են որ Հայաստանը բոլոր հայերուն հայրենիքն է։ Եթէ այդպէս է, ուրեմն Կրթութեան, Գիտութեան, Մշակոյթի եւ Սպորտի Նախարարութիւնը բոլոր հայերուն Կրթութեան, Գիտութեան, Մշակոյթի եւ Սպորտի Նախարարութիւնն է։ Անշուշտ Նախարարութիւնը այսօր շատ հեռու է այդ ըլ-

ՄԾԱԿՈՅԹ... Ծար. էջ 10

ՎԱՀԱՆ ԶԱՆՈՅԵԱՆ

MLA Babikian reports about Artsakh Forum in Queen’s Park

TORONTO—On November 20, in the Legislative Assembly of Ontario, MLA Aris Babikian delivered the following statement regarding his participation at the recently held Artsakh Forum in Stepanakert, Artsakh.

The forum hosted a significant number of lawmakers from over 30 countries that demonstrated their commitment to breaking Artsakh’s international isolation and highlighting it’s commitment to democracy, freedom and human rights.

In his statement Mr. Babikian said: “Today I stand here to speak about my recent trip to Armenia and Artsakh. In October, I, along with three other elected officials from Ontario and Quebec, had been invited by the Armenian National Committee of Canada to attend the Cooperation for Justice and Peace conference in the re-

gion. The conference, which was attended by parliamentarians from 30 countries, was a great forum for dialogue and an opportunity to learn about Artsakh”.

“During our visit, we also had meetings with the President of Artsakh and the Speaker of the Artsakh Parliament”.

“The conference showcased the commitment of the Artsakh people to democracy and human rights that I know they share with Canadians. I am very much looking forward to continuing the co-operation and the conversation that began at the conference in October to ensure that peace and democracy are the hallmark of politics in the region for generations to come”.

“During the Canadian delegation visit to Armenia, we had

Continued on page E2

ARF leaders meet with U.S. Ambassador to Armenia

YEREVAN—Members of the Armenian Revolutionary Federation Supreme Council of Armenia on November 25 met with U.S. Ambassador to Armenia Lynne Tracy, who had requested the meeting.

Accompanying Tracy to the meeting, which was held at the ARF Supreme Council of Armenia headquarters, were the embassy’s political and economic desk director Ryan Campbell and political advisor Lilit Ohanyan.

ARF Supreme Council of Armenia chairman Ishkhan Saghatelian was joined by fellow members Artsvik Minasyan, Lillit Galstyan and Ashot Minasyan.

After thanking Tracy for initiating the meeting and congratulating her on her appointment as ambassador, Saghatelian presented an overview of

political developments in Armenia since last year’s regime change. He specifically the ARF’s assessment and concerns about the political situation in Armenia.

Other Supreme Council members stressed the imperative for real, substantive and coordinated reforms in the country while, at the same time, pointing out the unhealthy climate surrounding constitutional and democratic institutions.

“I value the long-standing relationship of the US Embassy with Armenian political parties, including the ARF. The United States remains committed to supporting its democratic, economic and social governance in Armenia, as it has been for 27 years in our diplomatic relations,” Tracy said at the meeting.

Minimum wage raised in Armenia

YEREVAN—Armenia’s parliament backed on November 19 a government proposal to raise the minimum wage in the country by more than 23 percent.

The government announced plans for such an increase in June. A bill drafted by it at the time would raise the minimum monthly wage from 55,000 drams to 68,000 drams (US\$143).

The National Assembly passed the bill unanimously.

Arkady Khachatryan, a parliament deputy from the opposition Bright Armenia Party, echoed government assurances that it will somewhat reduce poverty. “A working person must not live below the minimum consumer basket level,” he said.

According to government

officials, the measure, effective from January 1, will benefit at least 80,000 workers across the country who earned 55,000 drams per month as of this summer. Most of them work for private firms.

The average monthly wage in Armenia currently stands at 178,000 drams (\$375), according official statistics.

The bill approved by the parliament marks the most drastic increase in the national minimum wage to date. It was set at 55,000 drams by the country’s former government in 2015.

The current government is also planning a 10 percent rise in pensions which average roughly 41,000 drams per month at present.

(azatutyun.am)

Aliyev admits Azerbaijan worked to alter demographics in Artsakh

BAKU—Azerbaijani President Ilham Aliyev has admitted the fact of a deliberate change in the demography of Nagorno Karabagh aimed at increasing the number of Azeri residents.

“Under the great leader Heydar Aliyev (his father – Ed.), the percentage of the Azerbaijani population in Nagorno Karabagh increased sharply, doubled,” Aliyev was quoted as saying by Day.az.

Heydar Aliyev himself said in an interview in 2002: “I am talking of the time, when I was first secretary, and helped the development of Nagorno Karabagh a lot.

“At the same time I tried to change the demography there. Nagorno Karabagh raised the issue of founding a higher education institute there, a university. Everybody was against

it. I had a think about it and decided to found it. However, with a proviso that there should be three sectors there — Azerbaijani, Russian and Armenian. It was founded.

“We sent Azeris from the neighbousring areas there, and not to Baku. We opened a large shoe factory there.

“By doing this and other things, I tried to increase the number of Azeris there, and reduce the number of the Armenians in Nagorno Karabagh.

Those who worked in Nagorno Karabagh at the time know about it”.

Nearing the collapse of the Soviet Union in 1989, Artsakh had a population of 145,593 Armenians (76.4%), 42,871 Azeris (22.4%), and several thousand Kurds, Russians, Greeks, and Assyrians.

(Panarmenian)

Bipartisan pressure mounts for U.S. Senate vote on Armenian Genocide Resolution

WASHINGTON—As part of an escalating bipartisan campaign to pass the Armenian Genocide Resolution, Senators Robert Menendez and Ted Cruz called for unanimous adoption of S.Res150, a move blocked on November 21 by a single Senator, David Purdue, reported the Armenian National Committee of America.

“If Senator Purdue and a handful of his colleagues want to vote against S.Res.150, they should vote against S.Res.150, but not prevent the vast majority of their Senate colleagues from voting for this bipartisan resolution,” said ANCA Executive Director Aram Hamparian. “We thank Senators Menendez and Cruz for their escalating pressure for a vote on the Armenian Genocide Resolution,

and stand with them – and the growing bipartisan list of co-sponsors — in doing all we can to over-ride Ankara’s veto in the U.S. Senate.”

Senators Menendez and Cruz made their request on the floor of the U.S. Senate, using a parliamentary procedure to fast-track consideration of S.Res.150, in the wake of the near-unanimous adoption of an identical resolution in the U.S. House, H.Res.296, on October 29th. Last week, only Senator Graham took to the floor to object to expedite passage of S.Res.150. Senators can present the resolution for unanimous consent as often as needed as part of a coordinated strategy to secure its passage.

In powerful remarks on the Senate floor, Senator Menendez read from State Department

cables sent by U.S. Ambassador Henry Morgenthau, U.S. Consul Jesse Jackson, and U.S. Ambassador Abram Elkus describing the events of the Armenian Genocide. “American officials, those with a credible and legitimate understanding of what took place made these statements — they are part of the historical record. They mark one of the prouder moments in the history of the State Department and our diplomacy,” explained Senator Menendez. He also cited that 28 countries — 11 NATO allies — have also recognized the Armenian Genocide, noting “none of them have ruptured their relationship with Turkey; none of them have ended their relationship with Turkey, as it relates

Continued on page E2

22nd Arpa International Film Festival wraps up with great success

HOLLYWOOD—The 22nd Arpa International Film Festival, one of Hollywood’s longest running film festivals, showcased Features, Documentaries, Shorts, Animated films and Music Videos from 15 different countries. This year’s festival once more highlighted a diverse range of films that explored themes such as genocide, war, environmentalism, music, art, and variety of issues. The festival was held at Hollywood’s historic American Legion Post 43 theatre from November 8 to 10.

Opening night on November 8 kicked off with a special reception and the screening of “Sand and Fire.” The film’s background music “Dle Yaman” was performed live before the film’s screening by none other than the amazing Alene Aroustamian, who thrilled the audience with her magical performance.

“Sand and Fire” was a film from Morocco, directed by Souheil Ben Barka, Morocco’s famous director who studied the craft in Italy. We were thrilled to find out that, growing up, his Armenian grandmother would sing “Dle Yaman” to him, which was very dear to his heart. The film tells the story of a Spanish army officer who is sent to Morocco as an explorer, with a mission to over-

throw the Moroccan Sultan.

